ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

30 ՀՈՒՆԻՍԻ
2023 թ.
№ 9 (1107)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Մաղթում ենք հաջողություններ և նվիրում ուսուցչի կոչմանն ու առաքելությանը

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի տոնականորեն ձևավորված սրահում ֆակուլտետի ղեկավարները հանդիսավորությամբ դիպլոմներ հանձնեցին բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա համակարգի շրջանավարտներին: Այս տարի ֆակուլտետն ավարտում է 86 շրջանավարտ, որից 28-ը՝ գերազանցությամբ:

Դեկան Էդգար Հովհաննիսյանը շնորհավորեց նրանց՝ մաղթելով, որ ստացած գիտելիքները ծառայեցնեն իրենց, իրենց ընտանիքներին ու պետականությանը, և «գիտելիքներով զինված՝ կարողանան ազգային կրթության հիմքերը դարձնել ավելի ամուր և նպատակային»:

«Եթե ուզում ենք ունենալ ուժեղ պետություն, նախևառաջ պետք է ունենանք ուժեղ և ազգային կրթական համակարգ: Իսկ այդ առաքելությունը վերապահված է հենց ձեզ»,- ընդգծեց դեկանը:

Դեկանը մաղթեց, որ շրջանավարտները չդադարեն երազել, երազեն Արարատն ու Շուշին վերադարձնելու մասին, իսկ երազանքները կարող են իրականացնել ուժեղ կրթահամակարգի և ուժեղ պետության պայմաններում:

Շրջանավարտներին շնորհավորանքի խոսքեր հղեցին քննական հանձնաժողովների նախագահները և ամբիոնների վարիչները:

Պատմության և հասարակագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ, Մատենադարանի գիտական քարտուղար Վահե Թորոսյանն այս ֆակուլտետի շրջանավարտ է: Իր համար նա պատիվ է համարում նոր կարգավիճակում ➤2

Հունիսի 28-ին Կուլտուրայի ֆակուլտետը մի նոր սերունդ ճանապարհեց դեպի կյանք՝ մասնագիտական գիտելիքներով, հմտություններով ու կարողություններով: Դիպլոմների հանձնման երկար սպասված արարողությունն է: Շրջանավարտները ուրախ են ու երջանիկ, նաև հուզված, որովհետև կյանքի մի կարևոր փուլն ավարտեցին, պետք է անեն հաջորդ քայլերը՝ հստակ ու հաստատուն...

Ֆակուլտետն առանձնանում է մշակութային ուղղվածությամբ, այստեղ սովորում են ապագա լրագրողները, ռեժիսորները, օպերատորները, լուսանկարիչները, դերասանները, պարուսույցները...

«Պարարվեստի մանկավարժություն» մասնագիտության սռկա ուսուցման բակալավրիատի շրջանավարտ Սիլվա Մելքոնյանը կիսում է մեզ հետ իր զգացողություններըգ«Ֆակուլտետը միանշանակ մեզ տվեց շատ մեծ փորձառություն, լավ պրակտիկա անցանք, մեզ հետ աշխատեցին պրոֆեսիոնալ մասնագետներ, այստեղ լավագույն դասախոսական ներուժն է, որ մեզ մասնագիտական գիտելիքներ փոխանցեց, ծանոթացրեց պարարվեստի մանկավարժության առանձնահատկություններին»:

Սիլվա Մելքոնյանը շարունակելու է կրթությունը մագիստրատուրայում, իսկ մինչ այդ Երևանի համայնքներից մեկում բացել է իր պարային ստուդիան, որտեղ ավելի քան 10 տարի զբաղվում է պրոֆեսիոնալ պարով:

Այս տարի ֆակուլտետն ունի 176 շրջանավարտ, որից 89-ը ավարտեցին բակալավրիատը, 16-ը՝ մագիստրատուրան, 76-ը՝ հեռակա ուսուցման համակարգը, գերազանցությամբ ավարտել է 39 շրջանավարտ:

Բարի՜ երթ, սիրելի շրջանավարտներ: Ուր էլ լինեք՝ աշխատեք հավատարիմ լինել ձեր մասնագիտական առաքելությանը: Թող ձեր բոլոր ձեռնարկները պսակվեն հաջողությամբ: ➤2

Ռեկտորն ընդունեց Հյուսիս-Կովկասյան դաշնային համալսարանի պատվիրակությանը

Մանկավարժական համալսարանում հունիսի 26-ին հյուրընկալեցին Հյուսիս- Կովկասյան դաշնային համալսարանի պատվիրակությանը՝ ռեկտոր Դմիտրի Բեսպալովին, միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Ալբերտ Կումուկովին, արտասահմանյան պատմության, քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ Իգոր Կրյուչկովին, Ընդհանուր հոգեբանության և անձի հոգեբանության ամբիոնի վարիչ Իրինա Բելաշեվային:

Հանդիպմանը ներկա էին ՀՊՄՀ միջազգային հարաբերությունների և աշխատակազմի գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյանը, Պատմության և հասարակագիտության ֆակոլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը:

Համալսարանի հետ բուհը նախկինում տարբեր ծրագրեր է իրականացրել: Հյուսիս-Կովկասյան դաշնային համալսարանի ռեկտոր Դմիտրի Բեսպալովը վստահ է՝ գործակցությունը կշարունակվի նոր ուղղություններով, պայմանագրի ստորագրումն էլ երկու բուհերի հարաբերություններին նոր որակ կհաղորդի:

Նա խոսեց Հյուսիս-Կովկասյան դաշնային համալսարանի հնարավորությունների, ներուժի, ուսանողների փոխանակման, ինչպես նաև մի շարք կազմակերպվելիք նախաձեռնությունների մասին, որոնցում կընդգրկեն նաև Մանկավարժական համալսարանի ուսանողներին:

Ընդհանուր հոգեբանության և անձի հոգեբանության ամբիոնի վարիչ Իրինա Բելաշեվան առաջարկեց կոնկրետ համագործակցություն հոգե- ➤2

Ռեկտորն ընդունեց Հյուսիս-Կովկասյան դաշնային համալսարանի պատվիրակությանը

➢1 բանության ոլորտում՝ համատեղ հոգեբանական հետազոտությունների, բակալավրիական և մագիստրական համատեղ ծրագրերի իրականացում:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը որոշակիացրեց հոգեբանության և սոցիոլոգիայի ոլորտի հետազոտությունների թեման՝ առաջարկելով համատեղ հետազոտություններ նոր ժամանակների մարտահրավերների ազդեցությունը երեխաների հոգեկան աշխարհի փոփոխությունների համատեքստում, համագործակցություն նախակրթարան, դպրոց, վարժարան, բուհ շարժագծով, գիտական հոդվածների երկուստեք տպագրություն համալսարանական պարբերականներում և այլն:

Հանդիպումն ավարտվեց համագործակցության պայմանագրի ստորագրումով, որից հետո գործընկեր բուհի ռեկտոր Դմիտրի Բեսպալովը Հյուսիս- Կովկասյան դաշնային համալսարանի մեդալ շնորհեց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանին՝ ի նշան համագործակցային հարաբերությունների խորացման ու ամրապնդման:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Մաղթում ենք հաջողություններ...

➢1 շնորհավորել հարազատ բուհի ու ֆակուլտետի շրջանավարտներին՝ փաստելով, որ «բոլոր ժամանակներում, անգամ հին աշխարհում ու միջնադարում, ուսուցչի մասնագիտությունը եղել է ամենա-

հեղինակավորը»:

Հայոց պատմության ամբիոնի վարիչ Էդիկ Գևորգյանը շնորհավորեց ուսանողներին, որոնք արդեն գիտելիքների մեծ պաշար ամբարած շրջանավարտներ են: Ամբիոնի վարիչը նկատեց՝ ձեր ուսումնառության տարիներին շատ փորձությունների հանդիպեցիք, ձեր սերնդակիցներից շատերն իրենց կյանքը զոհաբերեցին վասն հայրենյաց: Դուք շատ անելիք ու ասելիք ունեք հենց ձեր սերնդակիցների համար:

Էդիկ Գևորգյանը շրջանավարտներին մաղթեց ակտիվ դերակատարություն մեր երկրի հասարակական-քաղաքական կյանքում:

Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Խաչատուր Ստեփանյանը միացավ շրջանավարտների շնորհավորանքներին՝ կյանքի նոր փուլ մտնելու կապակցությամբ: Նա անդրադարձավ դասախոսների ներդրած այն մեծ ջանք ու եռանդին, որի շնորհիվ ուսանողները հասել են այս բաղձալի օրվան:

«Հաջորդ սերնդի հայրենասեր ու պետականամետ լինելը պայմանավորված է լինելու ձեր՝ դպրոցում ցուցաբերած մասնագիտական կարողություններով, քաղաքացիական դիրքորոշումներով:

Մանկավարժի աշխատավարձը ցածր է, բայց կոչումը՝ բարձր: Դուք ականատես եղաք, թե ինչպես հայ ժողովրդի լավագույն զավակները արյուն թափեցին մեր այսօրվա համար, դուք էլ պարտավոր եք քրտինք թափել նրանց գործը շարունակելու համար: Պետք է արժևորեք նրանց թափած արյունը՝ ձեր աշխատանքով, նվիրումով և ապագայի հանդեպ ունեցախ հավատով»:

Խ. Ստեփանյանը հորդորեց շրջանավարտներին՝ փարատել դպրոցում հանդիպած բոլոր հիասթափությունները:

Հասարակագիտության և քաղաքագիտության

ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հայկ Սուքիասյանը վստահություն հայտնեց, որ շրջանավարտները գիտելիքներից բացի իրենց հետ կտանեն այս բուհի իմաստնությունը: Նա բարի ընթացք մաղթեց շրջանավարտներին, բայց նաև՝ նվիրում պետությանը, նվիրում գիտելիքով:

«Հասարակագիտություն» և «Իրավունք» մասնագիտությունների գծով ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ Դավիթ Հակոբյանը շրջանավարտներին հորդորեց. «Գիտակցեք, որ այսօր մենք ականատեսն ենք ոչ թե միջազգային իրավունքի, այլ իրավունքի միջազգայնացման: Ձեր գիտական աշխատանքները իրականացրեք այդ ուղղությամբ:

Չգտեք երջանկության և հավատացեք մարդու իրավունքներին ու ազատությանը»:

Եղիշե Գեղամյանը գերազանցությամբ ավարտել է պատմության բաժնի բակալավրիատը: Ուսումը շարունակելու է մագիստրատուրայում: Մտադրվել է՝ ավարտելուց հետո նվիրվելու է ուսուցչի առաքելությանը: Թող որ ցածր աշխատավարձով, մասնագիտական գործունեությունը կհամադրի այլ աշխատանքի հետ: Հիացած է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական ներուժով, որը համարում է հանրապետությունում լավագույնը:

Մարիամ Մարտիրոսյանն էլ գերազանցությամբ ավարտեց մագիստրատուրան՝ «Պատմություն» մասնագիտությամբ: Հասցրել է և՛ գերազանց սովորել, և՛ փոքրիկ ունենալ: Դիպլոմն ստանալու է եկել երեխայի հետ: Ուսումնառության տարիները բավականին հետաքրքիր էին, աննկարագրելի զգացողություններ ունի: Ծնունդով Երևանից է, բայց ամուսնացել է Գավառի Գանձակ գյուղում: Վստահեցնում է՝ անպայման աշխատելու է դպրոցում:

Դե ինչ, սիրելի շրջանավարտներ: Մաղթում ենք հաջողություններ և նվիրում ուսուցչի կոչմանն ու առաքելությանը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Դիպլոմներ՝ մշակույթի ոլորտի շրջանավարտներին

Կոնֆերանս՝ «Ուսյալ ազգի վկայագրերը» խորագրով

ՀՊՄՀ-ում «Օսմանյան կայսրության հայկական կրթական ուսումնական հաստատությունները. ուսյալ ազգի վկայագրեր» ցուցահանդեսի կազմակերպումից հետո Մանկավարժության ամբիոնը վարիչ, պրոֆեսոր Սիդա Թոփուզյանի ղեկավարությամբ հայտարարվեց մրցույթ՝ «Ուսյալ ազգի վկայագրերը» խորագրով ուսանող-դասախոս միասնական նախագծային ծրագրի իրականացման համար:

Մրցույթին մասնակցել են տարբեր ֆակուլտետների 100 ուսանողներ և 27 դասախոսներ, այնուհետև ընտրվել 3 լավագույն նախագծերը:

Եզրափակիչ կոնֆերանսն անցկացվեց հունիսի 15-ին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում, որին մասնակցում էին ֆակուլտետների դեկաններ, դասախոսներ և ուսանողներ:

Ներկաներին ողջունեց նախաձեռնության հեղինակ Սիդա Թոփուզյանը, ով ևս մեկ անգամ փաստեց՝ և՛ ուսանողները, և՛ դասախոսները ամենայն պատրաստակամությամբ են վերաբերվել նախագծին, որը սովորեցրեց ճիշտ նպատակներ դնել, կանխատեսել, համագործակցել: Նախագծի իրականացումը շատերի համար դարձավ հայրենասիրության, ազգային ինքնագիտակցության, ինքնության ամրապնդման միջոց, և բոլոր մասնակիցները հնարավորություն ունեցան հաղորդակցվելու մեր ժողովրդի պատմությանը, օտար ափերում մեր նախնիների կրթական մաքառումներին, անվանի մանկավարժների գործունեությանը, մեր ժողովրդի ուսյալ զավակների կրթամանկավարժական, հասարակական գործունեությանը:

Նա թանգարան-ինստիտուտի ղեկավարությանը փոխանցեց ուսանող-դասախոս համատեղ նախագծային աշխատանքի փաթեթը. գիտական հիմք ունեցող լավագույն ուսումնասիրությունները տպագրվելու են նրանց պարբերականներում:

Նախագիծը կայացավ Մանկավարժական համալսարանի Մանկավարժության ամբիոնի և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի սերտ համագործակցությամբ, ինչպես նաև Հայաստանի ազգային գրադարանի, ՀՊՄՀ թանգարանի և գրադարանի աջակցությամբ:

Կոնֆերանսին առաջինը ներկայացվեց Սկզբնական կրթության և Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետների համատեղ աշխատանքը՝ «19-րդ դարի Զմյուռնիահայ կրթական հաստատությունների գործունեությունը»:

Նախագիծը ներկայացնողներն անդրադարձ արեցին այստեղի նշանավոր գործիչներին ու վարժարաններին, մասնավորապես Մեսրոպյան վարժարանին, որի փափազյանական շրջանը համարվում է ոսկեդար, Աղաբեկյան, Հռիփսիմյան և մյուս վարժարաններին, որոնք ապահովել են ազգային, հայեցի դաստիարակություն: Ներկայացնելով 19-դ դարի Զմյուռնիահայ կրթական հաստատությունների գործունեությունը՝ նախագծի մասնակիցները փաստեցին՝ վերոհիշյալ թեմայի իմացությունը հաստատապես կնպաստի ներկա և ապագա մանկավարժների ազգային հոգեկերտվածքի ձևավորմանը:

Երկրորդ աշխատանքը «Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանի գործունեությունն» էր, որ ներկայացրեց Բանասիրական ֆակուլտետի խումբը: Նախագծի մասնակիցները ներկայացրին առ այսօր գործող Կ. Պոլսի կրթական հաստատությունների անցյալն ու ներկան, տնօրեններին, անդրադարձ արեցին նաև գավառների կրթօջախներին:

Ներսես արքեպիսկոպոս Վարժապետյանի ջանքերով ստեղծված կրթօջախն այսօր ղեկավարում և ավանդույթները շարունակում է տնօրեն Սիլվա Մարկոսյանը: Երկսեռ վարժարանը քառամյա լիցեյի բաժիններով համապատասխանում է մեր ավագ դպրոցի մակարդակին:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի նախագծային աշխատանքային խումբը ներկայացրեց «Կարինի հայկական վարժարանները»: Մասնակիցները ուսումնասիրել էին Կարինի գավառի հայկական կրթական հաստատությունները, այդ թվում՝ մանկապարտեզները: Ներկայացրին նաև կրթական հաստատությունների ակնառու գործիչներին:

Գնահատող հանձնաժողովի անունից պրոֆեսոր Սուրեն Դանիելյանն ամփոփեց մրցույթը. «Արևմտահայ կրթության հրաշալի ճանապարհը ուսանողների անբասիր աշխատանքի միջոցով լավագույնս ներկայացվեց»:

Ու թեև ելույթ ունեցողներն ընդգծեցին, որ այս նախագծում հաղթողներ և պարտվողներ չկան, այնուամենայնիվ, 1-3-րդ տեղերը բախշվեցին՝ ըստ ուսումնասիրությունների կատարման ու խորքային մոտեցումների:

Սկզբնական կրթության և Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետների նախագծային խումբը «19-րդ դարի Զմյուռնիահայ կրթական հաստատությունների գործունեությունը» աշխատանքի համար (դասախոսներ Սուսաննա Սիսյան, Գայանե Եգանյան) արժանացավ 3-րդ մրցանակային տեղին, Բանասիրական ֆակուլտետի խումբն արժանացավ 2-րդ մրցանակային տեղին՝ «Կ. Պոլսո Կեդրոնական վարժարանի գործունեությունը» աշխատանքի համար (դասախոսներ Գրետա Հակոբյան, Քնարիկ Աբրահամյան), իսկ 1-ին պատվավոր մրցանակին արժանացավ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի նախագծային աշխատանքային խումբը՝ «Կարինի հայկական վարժարանները» ուսումնասիրության համար (դասախոսներ Սուսաննա Ջանիկյան, Արմինե Եփրիկյան):

Շնորհակալագրեր հանձնվեին նաև տարբեր անվանակարգերում:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկանն ընդգծեց՝ սա նախագծային ուսուցման փայլուն օրինակ էր, իսկ պրոֆեսոր Լաուրա Ասատրյանը փաստեց՝ այս նախագծով մենք հարստացրինք մանկավարժության պատմությունը տեսական նոր նյութերով. արևմտահայ կրթական հաստատությունների գործունեությամբ ապացուցեցինք, որ մենք համաշխարհային քաղաքակրթության մեջ մեծ տեղ ունենք:

«Հպարտ եղեք, որ դուք հայ եք, այնպես ապրեք ու արարեք, որ Հայաստանը ձեզնով ճանաչեն»,- ներկաներին հորդորեց պրոֆեսոր Սիդա Թոփուզյանը՝շեշտադրելով՝ հայ ժողովրդի ուսյալ զավակները աշխարհին այնքան բան են տվել:

Պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը վստահ է. «Մանկավարժականում լայն ճանապարհ հարթած, մեզ դեպի արևմտահայ աշխարհը գերջանքը և կորովը եկավ Սիդա Թոփուզյանից, անվիճելի է, որ նա արևմտահայ կրթության արժեքներին հաղորդակից դարձնելու գործում մեծ դեր խաղաց»:

Դասախոսների և ուսանողներ համար կազմակերպված էքսկուրսիան ուսանելի և ճանաչողական մեծ նյութ տվեց Հայոց ցեղասպանության մասին, թանգարան-ինստիտուտի ղեկավարներն էլ իրենց կողմից նվերներ փոխանցեցին նախագծի մասնակիցներին. դրանք վերապրածների հուշերը ներկայացնող գրքեր էին:

Մանկավարժական համալսարանի դասախոսական և ուսանողական կազմը ծաղիկներ խոնարհեց անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ցավալի կորուստ

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի «Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի» ամբիոնը ցավալի կորուստ կրեց: Կյանքի 61-րդ տարում անժամանակ կյանքից հեռացավ ամբիոնի երկարամյա դասախոս, ճանաչված ու սիրված պարուսույց-մանկավարժ Նելլի Արսենի Աբովյանը:

Նելլի Աբովյանը ծնվել է 1962 թվականին: 1984 թվականին ավարտել է Հայկական պետական մանկավաժական ինստիտուտի Կուլտուրայի ֆակուլտետի պարային բաժինը:

Մեծ է եղել նրա վաստակը հայ մանուկների գեղագիտական դաստիարակության և պարուսուցման գործում:

1984 թվականից առ այսօր դասավանդում էր Մանկավարժական համալսարանում՝ երիտասարդ սերնդին փոխանցելով պարարվեստի մանկավարժության և պարագիտության ոլորտում ունեցած մասնագիտական հմտություններն ու փորձը:

Տարբեր տարիների պարուսույց է աշխատել մի շարք հաստատություններում, այդ թվում՝ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների տեխնիկումում, Կանազի մշակույթի պալատում, ՀՀ Պաշտպանության նախարարությունում, Քաղաքային պիոներ պալատում, Կույր և թույլ տեսնող երեխաների դպրոցում, էստրադային և ջազային արվեստի պետական քոլեջում:

Երկարամյա գործունեության համար 2008 թվականին պարգևատրվել էր ՀՊՄՀ «Մանկավարժական համալսարան» մեդալով:

Որպես դասախոս, մանկավարժ-պարուսույց, որպես մարդ և ընկեր Նելլի Աբովյանը սիրված և գնահատված էր բոլորի կողմից, վայելում էր պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների սերն ու հարգանքը:

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը ցավակցում է գործընկերոջ ընտանիքին՝ Նելլի Աբովյանի անժամանակ մահվան կապակցությամբ:

Վաստակաշատ մանկավարժի հիշատակը վառ կմնա իր գործընկերների և ուսանողների սրտերում:

Ողջ կյանքի ընթացքում մնաց իր գրչին, իր սկզբունքներին հավատարիմ...



Երկարատև ծանր հիվանդությունից, 66 տարեկանում, մահացել է պետական-հասարակական գործիչ, անվանի լրագրող, Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի Հեռուստառադիոլրագրության ամբիոնի պրոֆեսոր Սերգո Երիցյանը:

Հուշի ու հիշողության, ընկերոջ ու գործընկերոջ մասին անվերջ շարունակվող գրառումները փաստում են լավագույն լրագրողի, հմուտ դասախոսի, լավ ընկերոջ, իր նախընտրած ոլորտին անմնացորդ նվիրյալի և պարզապես լավ մարդու մասին. քչերին է հաջողվում իրենից հետո թողնել հարուստ կենսագրություն, անհատական ոճ ու ձեռագիր, աշխատանքային հետաքրքիր միջավայր, ընկերների լայն շրջան ու հրաշալի ընտանիք…

«Հեռուստալրագրությունը նման է հավերժական սիրո, որից բաժանվելն անհնար է»,-ասում էր Սերգո Երիցյանը: Իսկ այս օրերին ասպարեզի հանդեպ նրա այդ մեծ սիրո մասին գրում են ընկերները…

«Մեր հանրային կյանքում ոչ բոլորի թողած հետքն է մնում անփոխարինելի: Այդ եզակի մասնագետներից էր հայտնի հեռուստալրագրող, լրագրության պատմաբան ու տեսաբան, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի դասախոս, բազմաթիվ գիտական, հրապարակախոսական հոդվածների, գրքերի, հեռուստահաղորդումների ու հեռուստաֆիլմերի հեղինակ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Երիցյանը: Նա ոչ միայն փայլուն հեռուստալրագրող էր, այլև լրագրության լուրջ տեսաբան, մարդ, որն իր բարձր գիտելիքներն ու հմտությունները սիրով փոխանցում էր ուսանողներին՝ նրանց ավելի արհեստավարժ և խոսքի հանդեպ ավելի պատասխանատու մասնագետներ տեսնելու ակնկալիքով: Սերգո Երիցյանի մենագրություններն ու ուսումնամեթոդական ձեռնարկները մշտապես փնտրված տեղ ու արժեք ունեն լրագրության բարդ ու հարափոփոխ ոլորտի համակարգված ուսուցման գործում: Բազմաթիվ երիտասարդ մասնագետների թեկնածուական ատենախոսություններ է ղեկավարել Սերգո Երիցյանը, միջազգային ակնավոր տեսաբանների ու հանրահայտ լրագրողների գրքեր թարգմանել՝ հարստացնելով լրագրողական կրթության գրադարանը». ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ Լևոն Գալստյանի գրառումն է:

«Չեմ մոռանա Սերգոյի տաք, մարդկային վերաբերմունքն իր գործընկերների և ուսանողների նկատմամբ, դիպուկ խորհուրդները զանազան գիտաուսումնական և մանկավարժական խնդիրներ քննարկելիս, բազում ուսանողական պրակտիկ-ուսումնական արշավները հանրապետության մարզեր»,-հավելել է ամբիոնի վարիչ, դոցենտ Լևոն Գալստյանը:

«Նրա հետ ունեցած յուրաքանչյուր օրվա, յուրաքանչյուր գործի մասին կարող եմ երկար գրել ու պատմել, բայց ուզում եմ անդրադառնալ նրա բացառիկությանը:

Երիցյանը բացառիկ աշխատասեր ու բացառիկ պարտաճանաչ, բացառիկ լավատես ու բացառիկ նպատակասլաց մարդ էր… Սա էր նաև պատճառը, որ մինչև վերջին օրը վստահ էի, որ հաղթահարելու է, ու սեպտեմբերին նորից միասին աշխատելու ենք»,-կարդում ենք Սերգո Երիցյանի ընկերոջ, նաև գործընկերոջ՝ Արթուր Բաղդասարյանի դիմագրքի էջին:

«Սերգո Երիցյանը առաջին լրագրողն է, որ խախտեց խորհրդային կաղապարը և հայկական հեռուստատեսություն բերեց «փողոցի սովորական մարդուն» առանց նախօրոք սովորած ու անգիր արված տեքստի: Սա հայկական հեռուստատեսության կարևորագույն անկյունաքարը եղավ»,-ասել է Հայաստանի պետական հեռուստատեսության երկարամյա տնօրեն Ստեփան Պողոսյանը:

«…Սերն ընդհանրապես մի զգացում է, որ բխում է անհատից և վերադառնում նույն անհատին՝ ավելիով: Ավելացածը սեփական սիրո անդրադարձն է, որ առավել քաղցր ու հաճելի է, քանի որ վերադարձել է իր նմանների սիրո զգացումներում ստացած նոր գույներով, նախշերով ու ջերմությամբ: Ասել է թե՝ հավերժական սիրո առանցքը մարդն է, և Սերգո Երիցյանի՝ հեռուստալրագրության նկատմամբ ունեցած սերը պտտվում է շուրջը», -դեռ շատ տարիներ առաջ գրել է գրող Ֆելիքս Բախչինյանը:

«Խոր ցավով տեղեկացա պետական գործիչ, կրթության և գիտության նախկին նախարար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր և վերջապես լավ բարեկամ Սերգո Երիցյանի անժամանակ մահվան մասին: Պետական գործչի կերպարին ոչ միշտ հատուկ պարզությամբ, համեստությամբ, խորությամբ և իմաստնությամբ՝ Երիցյանն ապրեց իր կյանքը՝ կայացման և հեղինակության ձևավորման դժվարին փորձությունների ճանապարհին պահպանելով ազնվությունն ու բարությունը, յուրաքանչյուրին անշահախնդիր աջակից լինելու կամքը: Մեծ քաղաքականության շրջապտույտում անգամ չմոռանալով իր բնօրրանը՝ Սերգո Երիցյանը հավերժական թելերով կապված էր Լոռվա ձորին, հայրենի ճոճկանին: Նա Լոռու դեսպանն էր, լոռեցու աջակից ձեռքը»,-գրել է Ալավերդի խոշորացված համայնքի ղեկավար Արկադի Թամազյանը:

«Ողջ կյանքի ընթացքում մնաց իր գրչին, իր սկզբունքներին հավատարիմ, ծառայեց հայոց պետականությանը, հայ լրագրությանն ու գրականությանը, հարստացնելով բազմաթիվ հետազոտություններով, գրական արժեքավոր հրատարակություններով, ֆիլմերով, պատմական նշանակություն ունեցող ռեպորտաժներով ու հեռուստատեսության և մամուլի տեսությանը նվիրված մենագրություններով: Եվ ամենակարևորը մնաց իր ընտանիքի, իր ընկերների, իր ուսանողների կողմից սիրված և հարգված Մարդ»,-վերջին հարցազրույցի նախաբանում գրել է Չեխիայի «Օրեր» պարբերականի գլխավոր խմբագիր Հակոբ Ասատրյանը:

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, աշխատանքային կոլեկտիվը, ուսանողները խորապես ցավում են Սերգո Երիցյանի անժամանակ մահվան առթիվ՝ իրենց վշտակցությունը հայտնելով կնոջը՝ Կարինե Տիտանյանին և ընտանիքի անդամներին ու հարազատներին:

«Հե՜յ... Ո՞վ կա...»



«ԱԻԴԱԱրտ» թատրոնի, Մանկավարժական համալսարանի և Շենգավիթի համայնքի Պատանեկության ստեղծագործական կենտրոնի համագործակցությամբ, ՀՊՄՀ պրոֆեսոր Ամիդա Հովհաննիսյանի սցենարով ու բեմադրությամբ, հունիսի 25-ին Հովհաննես Թումանյանի անվան տիկնիկային թատրոնի բեմին ներկայացվեց «Հե՜յ... Ով կա...» բեմադրությունը՝ ըստ աշխարհահռչակ, ամերիկահայ գրող Վիլյամ Սարոյանի համանուն ստեղծագործության:

Նշենք, որ Ամիդա Հովհաննիսյանը պրոֆեսիոնալների հետ ոչ պրոֆեսիոնալ պատանիներին ընդգրկելու հրաշալի փորձ ունի: Պրոֆեսորը մասնագիտորեն կրթում է այդ տաղանդավոր պատանիներին, որոնցից շատերը հետագայում դառնում են իր սաները Մանկավարժականի Կուլտուրայի ֆակուլտետում. և սա մասնագիտությունը ճիշտ ընտրելու լավագույն ճանապարհն է:

«Մենք պարտավոր ենք մշակույթով կրթել մեր երիտասարդներին, այլ ելք չունենք»,-ասաց պրոֆեսոր Ամիդա Հովհաննիսյանը՝ ներկաներին մաղթելով բարի դիտում:

Սկսվում է ներկայացումը. երաժշտական և պարային հետաքրքիր լուծումներով ժամանակ առ ժամանակ ընդմիջվում է գլխավոր հերոսների՝ բանտում հայտնված տղայի և բանտի խոհարարուհու՝ Էմիլիի երկխոսությունը: Պարողների անխոս լռությունն այնքան խոսուն է, գլխավոր հերոսների երկխոսությունն՝ այնքան անմիջական ու անկեղծ...

Անարդարությունն ամենուր է. բանտում հայտնված տղան փիլիսոփայորեն է վերաբերվում կյանքին, հավատում է, որ արդարությունը կհաղթի, հույսեր է փայփայում, որ ինքն ավելի լավը կդառնա Տեխասի Մատադոր քաղաքի բանտից դուրս գալուց հետո, կամուսնանա խոհարարուհի աղջկա հետ, կհարստանա, նրան կտանի Սան Ֆրանցիսկո, որտեղ ամեն ինչ նույնն է, ինչ որ մյուս քաղաքներում, բայց որտեղ մարդիկ իրար սիրում են... «Մարդ պետք է միշտ մեկին ունենա իր կողքին... Եվ պետք է ունենալ լավ մարդուն: Մեկին, որ, իմանալով հանդերձ, որ դու վատն ես, այնուամենայնիվ սիրում է քեզ: Ես գիտեմ, որ ես վատն եմ, բայց ինչ կարող եմ անել: Եթե դու ինձ հետ գաս, ես կլինեմ աշխարհի ամենաերջանիկ մարդը: Ես կդադարեմ այլևս վատ մարդ լինելուց...»:

Ու ամբողջ ընթացքում բանտային խցում հայտնված միայնակ տղան ձայնում է՝ «Հե՜յ... Ով կա... գոնե մեկն ու մեկը...»:

- Գիտե՞ս,-ասում է բանտի խոհարարուհուն,-երկրագունդը երկու մասի է բաժանվում. մի մասը զոհաբերվողներն են, մյուսները՝ զոհերին ընդունողները: Մարդկանց մեծ մասը կարծում է, թե զոհաբերող է, բայց...

Մի կնոջ թակարդի մեջ հայտնված տղան փորձում է հասկանալ կյանքի դառը ճշմարտությունը.

-Հոգին կարելի՞ է գնել... հոգին կորցրած մարդն ո՞ւմ է պետք...

Մեր հերոսները վստահ են՝ մարդիկ կորցնում են հոգին, նրա հետ էլ սերն ու հավատը...

- Հե՜յ ո՞վ կա, գոնե մեկն ու մեկը... Ձայնում է տղան, բայց բանտային ճաղավանդակների ներսի լռությունը չի խախտվում որևէ մեկի ներկայությամբ, բացի միամիտ ու անկեղծ խոհարարուհուց և ժամանակ առ ժամանակ հայտնվող մի խենթից...

Տղան հույսը չի կորցնում, արդարությունը կվերականգնվի. «Հե՜յ, ո՞վ կա, գոնե մեկն ու մեկը...»: Չգիտի, որ աշխարհը խուլ է, որ արդարություն չկա... Աստվածաշնչյան պատվիրաններն է արտաբերում՝ մի՛ սպանիր, մի՛ շնացիր... Բայց հաջորդ պահին հասկանում է՝ այդ նրանք են բռնաբարում լույս աշխարհ եկած ամեն լուսավոր բան...

Աշխարհը լույսի ու ստվերի համատեքստում ընկալող տղան բանտում դատապարտված է մահվան...

«Մարդիկ ամեն տեղ էլ նույնն են, փոխվում են, երբ սկսում են սիրել»,-շարունակում է տղան. սարոյանական պարզ փիլիսոփայությունն է թևածում դահլիճում, բայց ողբերգությունը չի ուշանում... սև հագուստներով մահը գուժող մարդ-ստվերների բերանները սոսնձած ժապավեններն էլ փաստում են՝ արդարության դեմ մարդիկ ու աշխարհը լուռ են, որովհետև սեր չկա միմյանց հանդեպ, որովհետև արդարության ձայնը լսելու համար մարդիկ կույր ու խուլ են ձևանում...

Հե՜յ, ո՞վ կա... գոնե մեկն ու մեկը՝ հանդիսատեսի ականջին խուլ արձագանքում է տղայի հեռացող ձայնը՝ թողնելով անարդար աշխարհի մասին սարոյանական ու նաև մեր պատկերացումներն ու ընկալումները, թախիծն ու սերը...

Բեմական խաղով փայլող պատանիների հայացքներն էլ հեռացող տխրության միջից կարծես հորդորում են՝ սիրեք իրար, և գուցե մի օր արդարությունը կհաղթանակի...

Միլվա ԱՍՐՅԱՆ

Համալսարան-նախակրթարան

Դեպի դպրոց...

«Սկսվում է փոքրիկ մարդուկների և մեծ գործերի ժամանակը. մեր պատմությունը ընկերության և մեծ երազանքների մասին է: Բայց գիտե՞ք՝ ես այսօր մի քիչ տխուր եմ. մեկ ուզում եմ դպրոց գնալ, մեկ՝ ոչ, որովհետև չեմ ուզում հեռանալ մանկության այս հեքիաթից: Մենք դեռ 6 տարեկան ենք, և ամեն ինչ նոր է սկսվում. ուրեմն առաջ՝ դեպի դպրոց»,- Երևանի N 117 մսուր-մանկապարտեզում կայացավ «Թիթեռներ» ավագ «ա» խմբի ավարտական հանդեսը:

Դաստիարակ Սաթենիկ Քմեթյանի, մեթոդիստ Սվետա Վարդանյանի նախաձեռնությամբ, երաժշտության մասի պատասխանատու Արուսյակ Բաղդասարյանի և օգնական Արմինե Խաչատրյանի ջանքերով հանդիսատեսը մասնակիցը դարձավ ամենահայտնի հեքիաթի հերոսներից մեկի՝ Անգետիկի և նրա ընկերների արկածներին:

Կախարդական հայելուց այն կողմ դպրոց չգնալու, իր հեքիաթային, աշխույժ, խաղ ու ծիծաղով լի քաղաքը տեսնելու առաջարկով ապագա դպրոցականներին դիմեց Անգետիկը՝ վստահեցնելով՝ իրենք ամեն ինչ գիտեն: Նա սաների հետ եղավ գույների աշխարհում, իրեն փորձեց նկարչության, երաժշտության, պոեզիայի ոլորտում, սակայն իրեն բնորոշ պարծենկոտությունը, տգիտությունը, համարձակությունն ու սրամտությունը ստիպեց հուսահատվել՝ իր մոտ ոչինչ չի ստացվում:

Ավագ խմբի սաները, սակայն, լավ գիտեն՝ Անգետիկը, որն ունի հորինելու մեծ վարպետություն, վատ տղա չէ և իրականում շատ է ուզում սովորել, բայց ինչպե՞ս դա անի, եթե չի հաճախել մանկապարտեզ: Փոքրիկները կարծում են, որ ամեն բան պետք է սովորել հերթով:

«Անգետիկ, արի մեզ հետ մանկապարտեզ. դու այնտեղ ամեն ինչ կսովորես: Մեր դաստիարակները կօգնեն քեզ ազատվել ծուլությունից»,-ասացին երեխաներն ու վստահեցրին՝ պետք չէ տխրել. ամեն ինչ դեռ առջևում է, կհասցնի ուղղել իր սխալները:

Պարային կատարումներ, երգեր՝ խաղաղության, սիրով և հավատով լի մանկության մոլորակի, գիտելիքի աշխարհի մասին. Երևանի N 117 մսուր-մանկապարտեզի սաները հրաժեշտի և շնորհակալական խոսքեր ուղղեցին նախակրթարանի աշխատակազմին՝ լավ մարդ կրթելու, մայրաբար դաստիարակելու, իրենց կողքին լինելու համար: Խոստացան՝ կհիշեն նրանց ողջ կյանքում:

«Թիթեռներ» ավագ «ա» խմբի դաստիարակ Սաթենիկ Քմեթյանն իր սաներին մաղթեց կանաչ ճանապարհ՝ դեպի դպրոց, դեպի ուսման նոր ուղի: Համոզված է՝ կյանքում դեռ շատ առիթներ կլինեն հիանալու և հպարտանալու նրանց հաջողություններով:

Երևանի N 117 մսուր-մանկապարտեզի տնօրեն Հայկուհի Տերնազարյանն էլ օրը հիշարժան է համարում. դպրության աշխարհ են ճանապարհում ևս մեկ սերունդ: Խոստովանում է՝ 4 տարիների ընթացքում հնարավոր ամեն բան արել են, տվել ամենակարևորը՝ սեր, ուրախություն, ժպիտներ:

Տնօրենը երեխաներին մաղթեց ապրել խաղաղ երկրում, լինել առողջ, հաջողակ, երջանիկ:

Ծնողները շնորհակալություն հայտնեցին Երևանի N 117 մսուր-մանկապարտեզի տնօրենությանն ու աշխատակիցներին՝ երեխաների դաստիարակության գործում ունեցած մեծ ավանդի, հոգատարության և ջերմության համար: Ընդգծեցին՝ նրանց շնորհիվ փոքրիկները սովորեցին սիրել, հարգել. «Երեխաների խոսքերն այսօր գուցե մոռացվեն, բայց ձեր վարձատրությունը կլինի նրանց՝ կյանքում ունեցած ձեռքբերումները, որոնցով կհպարտանաք»:

Մարինե ԱՂԵԿՅԱՆ

Դեպի նոր նպատակներ

«Աղջիկ, ով իրենից մեծ գործեր է որոշել անել»,- շատերն ինձ հենց այսպես էին որակում, երբ սովորելով առաջին կուրսում, որոշել էի մտքերս իրականության վերածել, իսկ համալսարանը միայն աջակցում էր՝ երբեք չստեղծելով որևէ արգելք: Իմ հասակակիցներից շատերը վախենում էին դասախոսներից, իսկ ես որոշել էի բացահայտել նրանց ու բացահայտումներիս ճանապարհին ստեղծեցի «Զրուցում են Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի լավագույնները» խորագիրը: Ռիսկային որոշում առաջին կուրսեցու կյանքում, ով չէր էլ սպասում, որ այդքան դասախոս կաջակցի իրեն: Հետո աջակիցներիս քանակը սկսեց շատանալ՝ նյութերս սկսեցին տպագրվել համալսարանի թերթում, միաժամանակ սկսեցի համագործակցել կայքի հետ: Մեկ տարի անց, երբ սկսվեց պատերազմը, արդեն երկրորդ կուրսեցի Մարիամը դարձավ ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար: Դասերին զուգահեռ հսկայական կամավորական աշխատանքներ, թիմի հավաքագրում, աշխատանքների բաժանում... այդ ընթացքում սովորեցի գնահատել ամենակարևորը՝ փոքրիկ պահերը, որոնց հաճախ կարևորություն չենք տալիս: Անցավ ևս մեկ տարի, ու երրորդ կուրսեցի Մարիամը դարձավ կենտրոնական ուսանողական խորհրդի լրատվական հանձնաժողովի նախագահ՝ հսկայական հմտություններ, նոր կապեր ու լավագույն ընկերներ... բայց մի բան կիսատ էր, ու ֆակուլտետի հանդեպ եղած անսահման սերն արդեն չորրորդ կուրսեցի Մարիամի առաջ բացեց նոր ճանապարհ՝ պատիվ ու հնարավորություն այն նախագահելու:

Ու երբ այսօր հարցնում են, թե ինչու եմ այսքան սիրում Մանկավարժական համալսարանը, պատասխանը մեկն է՝ այն ինձ տվել է ավելին, քան պարզապես մասնագիտական որակավորումը, այն ինձ համար ավելին է, քան պարզապես ուսումնական հաստատությունը: Չորս տարիների ընթացքում իրապես զգացել եմ որ ուսանողն այստեղ ունի աճելու, զարգանալու, սեփական մտքերն ի կատար ածելու, անարդարությունների դեմ պայքարելու և առաջ գնալու բոլոր հնարավորությունները: Իսկ ֆակուլտետն ինձ համար չի եղել պարզապես ստորաբաժանում, այլ մեծ ու ամուր ընտանիք, չնայած որոշ առկա խնդիրների ու շատ հարցերի, պարզապես պետք է սիրել այն ու անել ամեն հնարավոր ու անհնար բան, որպեսզի որոշ չափով աջակից լինես:

Այսօր անսահման երջանիկ եմ, որ ունեմ այն, ինչ ունեմ՝ դասախոսների հարգանք, ուսանողների սեր ու նվիրվածություն և մի գաղափարի շուրջ համախմբված թիմակիցներ: Այդ ամենն, իհարկե, փոխադարձության սկզբունքով: Սակայն ինչպես հայտնի է՝ ամեն սկիզբ ունի ավարտ, և նոր սկզբի նպատակներն արդեն մագիստրատուրայի ճանապարհը բռնած Մարիամին բաժանում են ուսանողական խորհուրդը նախագահելուց, ու որքան էլ բարդ ու դժվարին է այդ որոշումը, միևնույն պահին մեծ է այն համոզմունքը, որ նոր հաջողությունները դեռ առջևում են, որոնք պետք է գրանցել հարազատ համալսարանի սիրելի ֆակուլտետում, իսկ հետագա գործունեությամբ նպաստել արդեն ոչ միայն համալսարանի, այլև երկրի զարգացմանը:

Իսկ հիմա՝ դեպի նոր նպատակներ...

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԵՐ ՀՅՈՒՐՆ ԵՆ ՄԱՐՍԵԼԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԸ

Ավետիկ
ՄԱՐԳԱՐՅԱՆ
13 տարեկան

Աշուն

Աշուն է, աշուն,
Տերևները նախշուն
Օրորվում են դաշտում,
Հայտնվում հանկարծ
Խենթ աղջկա մեղմ ձեռքում:
Ժպտադեմ աղջիկը
հանկարծ զարմանում
Ու նրանց հետ շուրջպար է բռնում:
Աշուն է, աշուն
Ոսկեզօծ դաշտում,
Աղջիկը հանկարծ
Մենակ է մնում,
Տերևներն են անհետանում՝
Թողնելով դաշտում
մի խենթ տրամադրություն

Անժելա
ՄՈՒՇԵՂՅԱՆ
8 տարեկան

Հուսամ՝ մի օր նորից կհայտնվեմ հեքիաթում

Ես այն երջանիկ երեխաներից մեկն եմ, ով ծնվելով և ապրելով օտար երկրում, հնարավորություն է ունեցել գոնե մեկ անգամ գտնվել հայրենիքում: Մայրիկս ինձ ամեն օր փորձել է պատմել ու նկարագրել այնպես տպավորիչ, որ ես կարծում էի, թե արդեն եղել եմ այնտեղ:

Ժամանակ շատ չեմ ունեցել, բայց շատ ու շատ վայրեր, այնուամենայնիվ, հասցրել ենք հաճախել՝ զբոսնելով քաղաքի կենտրոններում, հասնելով մինչև Սևանա լիճ, Դիլիջան, Գոշավանք: Շա՜տ-շա՜տ տաճարներ ու եկեղեցիներ ենք հասցրել տեսնել. ամեն ինչ շատ տպավորիչ էր: Ես չեմ թաքցնի և անկեղծ կլինեմ՝ Երևանում ինձ ամենաշատն ուրախացնում էին այն գունագեղ մանկական վայրերը, սրճարանները, որոնք այցելեցինք: Օրինակ շատ տպավորիչ էր «Երևան պարկը», ուր ես հայտնվեցի իրական հեքիաթում. խաղեր, ժպիտներ, թատերական ներկայացումներ, գլխապտույտ զվարճանքներ:

Ես շատ ուրախ և արկածային օր ունեցա:

Այժմ պատմեցի ու շատ կարոտեցի ամեն ինչին: Հուսամ՝ մի օր նորից կհայտնվեմ հեքիաթում:

ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռիփսիմե-Էմմա
7 տարեկան

Ես Ավետիսյան Ռիփսիմե-Էմման եմ: Ես 7 տարեկան եմ: Սովորում եմ Խաչատուր Աբովյանի անվան դպրոցի 2-րդ դասարանում: Ծնվել և ապրում եմ Ֆրանսիայի Մարսել քաղաքում: Սիրում եմ բանաստեղծություններ գրել:

Հայրենիք իմ, Հայաստան,
Գեղեցիկ ես անսահման,
Տատիս պատմած հեքիաթում
Դու միակն ես աշխարհում:

Վանեսա
ԱՎԱԳՅԱՆ
8 տարեկան

Իմ հայրենիք

Իմ չքնաղ երկիր, իմ հայրենիք Հայաստան, դարեր են անցել, բայց դու կանգուն ես, ինչպես մի հսկա լեռ՝ հպարտ ու թիկնեղ, գեղեցիկ ու վսեմ: Ոսոխները նենգ ու չար, միշտ որոգայթներ են սարքել, ամեն կողմից, ինչպես հեղեղ, պաշարել են ու նեղել, բայց քեզ երբեք չեն ցնցել, մնացել ես կանգուն՝ ինչպես մի բերդ: Քանի՜-քանի՜ բիրտ վայրենի ցեղեր փորձել են քեզ հատել ու ընդմիշտ թաղել, բայց հողի մեջ թաղված հատիկի նման նոր ծիլ ես տվել ու կյանքի տենչով հառնել: Ծնունդ են առել բյուր զորապետներ, գեներալներ և մարշալներ:

Իմ քաջասիրտ Հայաստան, հակառակ սրտիդ վերքերին, բազմամիլիոն մարտիկներ ելան ընդդեմ բռնության: Մեռան թշնամու սրից ոչ իբրև գերի, այլ իբրև հերոս: Նրանք, որ պայքարել ու ընկել են, իրենց արյունով բորբոքել են անկախության ու ազատության կրակը՝ որպես հավերժող արև, որ ընդմիշտ ծածանվի երկրի վրա դրոշը եռագույն, որ ողջ աշխարհում դառնա ինքնուրույն:

Կաս, պիտի լինես և հարատևես դարեր շարունակ, իմ անկախ հայրենիք:

Էդգար
ՄՈՎՍԵՍՅԱՆ
9 տարեկան

Իմ փոքրիկ Հայաստանը Մարսելում

Ես Մովսեսյան Էդգարն եմ: Ես հայ եմ, ծնվել եմ Ռուսաստանում, հիմա ապրում եմ Ֆրանսիայի Մարսել քաղաքում: Ես երբեք չեմ եղել հայրենիքում, բայց ես գիտեմ հայերեն գրել և կարդալ, ես սովորում եմ Մարսելի Խաչատուր Աբովյանի երկօրյա վարժարանում, որտեղ իմ սիրելի ուսուցչուհին՝ Իրինա Խաչատրյանը, մեզ հայերեն գրել և կարդալ է սովորեցնում, պատմում Հայաստանի մասին:

Ես նաև շատ եմ սիրում մեր հայկական տոները, հատկապես՝ Սուրբ Ծնունդը և Զատիկը: Մայրիկս այդ օրերին մեր տունը գեղեցիկ զարդարում է, մեծ ու տոնական սեղան է պատրաստում, որի շուրջ մենք հայերեն աղոթում ենք ու շնորհավորում ենք միմյանց:

Ես շատ եմ երազում լինել Հայաստանում և իմ աչքերով տեսնել իմ հայրենիքը:

Ագնեսա
ՄԱՐԳԱՐՅԱՆ
9 տարեկան

Հայ զինվորի մայրիկին

Իմ քաջ զինվորի հպարտ մայրիկ, գիտեմ, որ շատ դժվար է, բայց ուզում եմ, որ լինես ամուր, հպարտ, որովհետև դու ունես ամենաառնական ու ամենաքաջ որդին աշխարհում:

Այլևս երբեք թող պատերազմներ չլինեն այս աշխարհում, թող Աստված քեզ առողջություն ու երկար տարիների կյանք շնորհի…

Մեր սուրբ ու բարի մայրիկ:

Հայրենիք-Սփյուռք

Հայաստանից հեռու, բայց սրտով միշտ Հայաստանի հետ

Ռուսաստանի Դաշնության Օրենբուրգի մարզում հայերը հաստատվել են դեռևս 1734 թվականներին, զբաղվել հիմնականում առևտրով: Օրենբուրգում մինչ այսօր ապրում են հազարավոր հայեր, ովքեր ամուր պահում են իրենց լեզուն, հավատքը, ավանդույթներն ու մշակույթը: Տարբեր ժամանակներում ամենամեծ հայրենասերները երբեք առիթն ու հնարավորությունը բաց չեն թողել՝ ստեղծելու կրթօջախներ, դպրոցներ, հայկական երգի ու պարի խմբակներ:

Առաջիններից մեկն էր Օրենբուրգում իր կյանքի վերջին օրերը անցկացրած մեծարգո բանաստեղծ Վահան Տերյանի անունը կրող երկօրյա դպրոցը, որը գործում էր «Տերյան» հայ մշակութային հասարակական ֆոնդի Օրենբուրգի տարածաշրջանի քաղաքային բաժնի ներքո, որի նախագահն էր Աննա Օսեփյանը:

➢8

Մարգարիտ Դերանցը (Ռիտա Տեր-Մանվելյան) ծնվել է Ստեփանակերտ քաղաքում, ապրել է Երևանում, 2002 թվականից տեղափոխվել և ստեղծագործում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Հայաստանի Հանրապետության Գրողների միության անդամ է:

Վեց գրքերի հեղինակ է: Առաջին երեք գրքերը լույս են տեսել Լոս-Անջելեսում «ԲՅՈՒՐԵՂԱՊԱԿԵ ԾԱՂԿԱՄԱՆԸ» վիպակը, 2013 թ., «ՍԱՐԵՐՈՒՄ ՊԱՀՎԱԾ ԳԱՂՏՆԻՔԸ» վիպակների, պատմվածքների ժողովածուն, 2015 թ., «ՄԵՆԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՌԱԿՈՒՍԻ» վիպակների, պատմվածքների ժողովածուն, 2017 թ.:

Վերջին երեք գրքերը լույս են տեսել Երևանում «Անտարես» հրատարակչության կողմից. «ՍԵՐ ԵՎ ԷՄԻԳՐԱՑԻԱ» վիպակների և պատմվածքների ժողովածուն 2017 թ, 2019 թ. XXI դար մատենաշարով լույս է տեսել «ՔՐՏՆԱՁՈՒԿ» պատմվածքների ժողովածուն, 2021 թ. կրկին XXI դար մատենաշարով «ՍԵՐ ԼՈՒՍՆԵԶՐԻՆ» վեպը:

Նրա ստեղծագործությունները թարգմանվել են անգլերեն և ռուսերեն:

Պարգևատրվել է Նարեկացու ոսկե մեդալով (2021), Արցախի գրողների միության և «Գրիգոր Նարեկացի» համալսարանի կողմից, արժանացել Լոս-Անջելեսի ՀՀ Գլխավոր հյուպատոսության և համայնքի մշակութային կազմակերպությունների բազմաթիվ պատվոգրերի՝ հայապահպանության գործում ունեցած նշանակալի ավանդի համար, Փարիզում Ազնավուր հիմնադրամի կողմից արժանացել է ոսկե մեդալի (2023):

Բազմիցս տպագրվել է պարբերական մամուլում, համահեղինակային տարեգրքերում, ինչպես Հայրենիքում (Հայաստան, Արցախ), այնպես էլ ԱՄՆ-ում, Կանադայում, Լիբանանում, Իրանում, Երուսաղեմում:

Հայրենիք-Սփյուռք

Մարգարիտ Դերանց

ՀԵՔԻԱԹ ԱԼՅՈՒՐԻ ՄԱՍԻՆ

Բժշկական համալսարանի ուսանողների մեջ պատկառելի թիվ էին կազմում ազդեցիկ պաշտոնյաների զավակները: Առավոտյան, երբ սկսվում էր ուսանողների հոսքը՝ համալսարանի բակը դառնում էր նորաձևության բեմահարթակ: Այստեղ էր սկիզբ առնում հնսունական թվականների ցուցամոլության շոուն, այստեղ էին ցուցադրվում բնական մորքուց մուշտակներ, երևանյան քամուց թրթռուն մոդայիկ շրջազգեստներ, որոնք ձեռք էին բերվում բավականին թանկ ու բարձրակարգ խանութներից: Եվան իր համեստ հագուկապով դուրս էր բոհեմական մրցակցությունից:

Սեզոնային արձակուրդներին նա վերադառնում էր հայրենի գյուղաքաղաք, օգնում էր ատամնաբույժ մորը խմորեղեն թխելիս, որի յուրաքանչյուր կտորը հիսուն դրամի շահույթ էր բերում, այսինքն՝ մի տուփ լուցկի: Ամենաէժան կոշիկը գնելու համար անհրաժեշտ էր խմորեղենի երկու հարյուր կտոր… Ուսման տարեկան վարձը՝ տասնչորս հազար կտոր…

Գեղեցկուհի քույրը, տատիկի սիրելին, ուսման մեկ տարվա վարձավճար էր պարտք, բայց չէր էլ անհանգստանում: Տատիկի աչքը «խաղում» էր:

«Ախր սա ո՞ւմ քաշեց,- փնթփնթում էր տատը,- ոնց նայում եմ՝ Եվան տանն է մնալու»:

Նա այս էլ որերորդ անգամ մտքով թափ էր տալիս գերդաստանի տոհմածառը՝ հատ-հատ հիշելով անցավոր կանանց, որոնք բարեկազմություն և կանացի հմայք էին փոխանցել ժառանգաբար, ապա զննում էր Եվայի կարճլիկ, թմբլիկ ոտքերը: Աղջիկը խիստ տարբերվում էր. ցեղին բնորոշ առանձնահատկությունները շրջանցել էին նրան: Հերքվում էին ժառանգական օրինաչափություններ, որոնք հաստատվել էին անցած սերունդների ժամանակներում: Այո, տոհմի բոլոր կանայք եղել էին բարետես ու ճիշտ ժամանակին ,զույգվողե: Եվ տատիկն ինքն էլ երբեմնի սլացիկ գեղեցկուհին էր:

Եվան մանկուց արդեն համակերպվել էր «տան միակ գեշը» հեգնախառն բնորոշման հետ և ուշադրություն չէր դարձնում տատի փնթփնթոցներին: Աղջիկը մինչև իսկ քունն էր զոհաբերում, որպեսզի չընդհատվեր խմորեղեն թխելու անվերջ գործընթացը, բայց դրա կարիքն առանձնապես չկար: Խմորեղենը հաճախ հնանում էր խանութում երկար մնալիս, ապա՝ հայտնվում աղբարկղում: Եթե սուր ատամնացավով մեկը դուռը զանգում էր կեսգիշերին, մայրն ուրախությունից փայլում էր, քանզի իրավիճակի փոփոխությունը ենթադրում էր տաք վառարանից հեռանալու և մի քիչ նստելու հրաշալի հեռանկար:

Կան մարդիկ, ովքեր ապրում են փչացած ատամներով և ատամնաբույժի միջամտությանն են դիմում ծայրահեղ դեպքերում: Չքավորությունը պարտադրում է ուրույն կենսակերպ: Գոյատևող մարդը հայտնաբերում է բազմաթիվ հնարքներ, որոնք կյանքն ամեն գնով պահպանելու ջանքեր են իրականում, իսկ ատամների մասին հոգալը տրված է միայն մորթե մուշտակներով «բուրժուաներին»:

Միսը թանկ էր: Եվան ամբողջ օրը մակարոն էր ուտում և, բնականաբար, քաշի ավելցուկ ուներ: Լինում էին օրեր, երբ աղջիկը խորհում էր իրական կյանքի և դասագրքերից դուրս աշխարհի մասին՝ գողունի զննելով սիրահար զույգերին, որ անհոգ ճեմում էին համալսարանի միջանցքներում: Նախանձո՞ւմ էր: Թերևս՝ ոչ: Գիտեր ազատության իր սահմանները, որ սկբնավորվում էին տաք վառարանից, խմորեղենի հնացող կտորներից և ավարտվում էին այստեղ՝ գլխապտույտ ընթերցանության մեջ:

Ահա անցավ քաղաքավարի երիտասարդը՝ քաղցրիկ ընկերուհու նազուկ մեջքը գրկած: Այս երիտասարդը մյուսների պես չէր ծաղրում Եվային՝ ակնարկելով կարճլիկ հասակը, քաշի ավելցուկն ու գավառականին բնորոշ առոգանությունը: Եվայի միակ սիրելին այս երիտասարդն էր: Եվան ցանկահարույց հայացքներով ուղեկցեց երիտասարդին: Ա՜խ, երանի ինքը լիներ նրա ընկերուհու փոխարեն, բայց այս ցանկության կատարումն ի սպառ անհնար էր:

Երբեմն, տրվելով հոգեմաշ ֆանտազիաներին՝ աղջիկը պատկերացնում էր համարձակ իրավիճակներ, և խեղճանում էր ապա… Ի՜նչ խղճալի արարած էր ինքն այս իրականության դաշտում: Նույնիսկ եթե շրջանցեր ավանդապահ օրենքները, առաջնորդվեր մարմնի ցանկությամբ՝ կուսությունը զոհաբերելու պատրաստակամությունն ընդունելով, միևնույն է, համակուրսեցի երիտասարդներից ոչ մեկը չէր բոցավառվի կրքով ու չէր քնի նրա հետ: Ո՞վ կմոտենար Բժշկական համալսարանի «անճոռնի ճուտիկին»: Իհարկե, այս մտքերը ինքնախղճահարության մտացածին պտուղներն էին լոկ: Արժանավոր կանանց տոհմից սերվող հետնորդը չէր կարող նման բան անել: Տատերը միշտ էլ հետևել էին բարոյականության ոսկե կանոնին. սիրո անկողինը կարող է լինել միայն ամուսնական մահիճը:

Եվան տուն էր վարձել քաղաքում, որպեսզի զերծ մնա հանրակացարանի «վտանգավոր» մթնոլորտից: Տան վարձը, հանապազօր հացն ու բժշկական կրթությունը մոր վրա նստեց հարյուր հազար կտոր խմորեղեն: Կտորներն, իհարկե, ավելի շատ էին, որովհետև խանութում հնացածը չէր մտել այս հաշվարկի մեջ: Երկարատև և համառ փնտրտուքից հետո, Եվան այդպես էլ աշխատանք չգտավ: Ստիպված՝ վարձակալեց մայրաքաղաքի արվարձանային նկուղում գտնվող ատամնաբուժական աթոռը՝ հույս փայփայելով, թե մշտական հաճախորդներ կհավաքի ժամանակի ընթացքում: Հաճախորդներ, իհարկե, հավաքեց, բայց նրանք բոլորն էլ անվճարունակ էին: Մեկ տարի հետո, «բիզնեսի» վնասները արդեն չափվում էին հիսուն հազար կտոր խմորեղենով: Եվայի համբերության բաժակը լցվեց ի վերջո, երբ շնորհակալության փոխարեն այսպիսի պատասխան ստացավ հիվանդից.

-Փող ունենայի՝ էս պադվալը մտնելու փոխարեն կգնայի առաջնակարգ ատամնաբուժարան: Էլ չեմ ասում, որ տեսքով բժշկուհու մոտ բուժվելը լրիվ ուրիշ հաճույք է:

Պատասխանողը գռեհիկ տղամարդ էր: Արհամարհե՛լ ու մոռանալ. ահա՛ ամենախելամիտն այս պարագայում: Բայց, չգիտես ինչու, Եվան երկար տարիներ հիշում էր այս խոսքերը, իսկ վիրավորանքը չէր լռում ոչ մի կերպ: Անողոք էին այս բառերը, քանզի արժանապատվությա՛նն էին դիպել, և հետապնդում էին՝ գերանդիով ուրվականի պես…

Ըստ հարևանների՝ Եվան «քոռ ու փոշման» վերադարձավ տուն: Տատն օրվա ընթացքում ամենաքիչը տասն անգամ դիմում էր հարսին և թոռնուհիներին.

-Ախր, ո՞ւմ է պետք աչք քոռացնելն ու կրթություն ստանալը: Վերջը սա չի՞: Գնաց կորավ հինգ տարի, էսօր էլի խմոր եք հունցում: Էս խմորեղենն էլ չլիներ, չգիտեմ, թե ինչ էինք անելու:

Գավառական քաղաքի մեկ տարվա գորշության և ձանձրույթի մեջ լույս ծագեց, երբ համակարգչի մեջ ապրող Ալեքս Ալլենն անունով երիտասարդը հետաքրքրվեց Եվայով: Բարձրահասակ ամերիկացի էր: Եվան սիրահարվեց նրան ծարավ սրտի անմնացորդ փափագով… Նվաղեց սիրուց: Բարձահասակ տղան կտրեց օվկիանոսն իր Եվային տեսնելու համար:

Հանդիպումը կայացավ:

-Դու լավն ես ու բա՛րի,- ասաց Ալեքսը:

Ամուսնացան: Ալեքսը իր կնոջը տարավ Ամերիկա, Բալթիմոր քաղաք, որտեղ ուներ ծնողներ և հայրական տուն:

Ամերիկացին ապշել էր: Մի՞թե քաղաքակրթության այս դարում ապրող կինը կարող է լինել կատարյալ մաքուր ու անփորձ: Չնայած սա առանձնապես կարևոր չէր: Ալեքսը բարությունն էր կարևորում՝ իբրև ամենանախընտրելի առաքինություն, իսկ կինը բարության մարմնացում էր: Երիտասարդ զույգ… Նրանք երջանիկ էին:

Ալեքս Ալլենի տոհմը մինչև յոթը պորտ կաթոլիկներ էին, բայց նա որոշեց այցելել Տիբեթի վանականներին, ցանկացավ միստիկ ճշմարտություններ, որոնք կբացահայտեին երևութական աշխարհի իրական դեմքը՝ տիեզերական խաղաղություն պարգևելով: Ծնողների մոտ՝ Բալթիմոր քաղաքում թողեց երիտասարդ կնոջը: Հայտնի չէ, թե քանի շաբաթ տևեց նրա «սուրբ առանձնությունը», բայց մի ժամանակ անց կնոջը գրեց, որ Տիբեթի լեռներում հանդիպել է արտասովոր մի աղջկա:

«Երբ քողարկում է մարմինը սրբիչով,- գրում էր Ալեքսը,- Դրախտի պարտեզն եմ հիշում, որովհետև այս կինը Եվայի կատարյալ գեղեցկությունով է օժտված: Չեմ կողմնորոշվում, ո՞ր մեկիդ եմ սիրում առավել. քե՞զ, թե՞ նրան»:

Անցան օրեր, և ամուսինը վերադարձավ: Եվան ներեց Ալեքսին, փայփայեց ու սիրեց առաջվա պես:

Մեծն Բուդդայի հազարամյա ոտնահետքերը Ալեքս Ալլենին մի քանի ամիս անց տարան Լաոս: Այս անգամ չէր երկմտում, «ազնիվ էր»: Կնոջը անհապաղ տեղեկացրեց, որ մինչև ականջների ծայրը սիրահարվել է ոմն լաոսուհու, որ կամուսնանա նրա հետ ամենայն հավանականությամբ:

«Դու ազատ ես,- գրում էր Ալեքսը,- կարող ես շարունակել կյանքդ այլ տղամարդու հետ, կամ ինչպես ուզում ես»:

Տխրեցին Ալեքսի ծնողները, չէին ցանկանում բաժանվել Եվայից: «Օտար» աղջիկը, ախր, նման չէր այլոց: Առավոտ կանուխ գնում էր սուպերմարկետ աշխատանքի, ցերեկը օգնում էր սկեսուր-սկեսրարին և մինչև ուշ գիշեր համալսարան ընդունվելու համար դասեր սերտում:

Եվան սրտի դառնությամբ ու տառապանքո՛վ վճարեց ամուսնական մի քանի քաղցր գիշերների դիմաց:

«Հավերժական սեր գոյություն չունի,- մտածում էր Եվան,- ստո՛ւմ են գրքերում գրված պատմությունները, որովհետև կյանքը այլ բան է ապացուցում»:

Նա հայտնվել էր անծանոթ, հսկայածավալ ամայության մեջ՝ մեն-մենակ: Աշխարհի բոլոր տխրությունները բուն էին դրել շվար սրտում:

Գեղեցիկ ապագայի հույսը և հաջողության գրավականը կրկին այցելեցին Եվային, երբ սուպերմարկետում պատահաբար ծանոթացավ բարձրահասակ, արդեն որերորդ սերնդով Ամերիկայում արմատակալած Ադամ Ադամյանի հետ: Տղամարդը մեծ էր տարիքով, հայրաբար ժպտաց նրան ու ասաց.

-Դու լա՛վն ես և խելացի…

Թե ինչ չափով էր ինքը խելացի՝ չգիտեր, բայց որ տղամարդն իրոք շատ խելացի էր՝ կասկած չկար: Երեկոյան նստում էր Ադամի ծնկներին, իսկ վերջինս հայրաբար պատասխանում էր փոքրամարմին կնոջ ամենատարբեր հարցերին, որ լեզվի, կրթության, օրենքների մասին էին… Ադամի խորհուրդները, մթության խորքից ճառագող լույսի պես, ուղեկցեցին նրան հետագա կյանքի ընթացքում: Չնայած մեծ

➢8

ՀԵՔԻԱԹ ....

➢7 խելքին և հարվարդյան կրթությանը, տղամարդն ամբողջ օրը տանն էր, պարապ-սարապ: Հավանաբար նրա կյանքում կատարվել էր անուղղելի մի բան:

Եվան նրբանկատ էր, չէր «փորփրում» տղամարդու սիրտը ավելորդ հարցերով: Այնինչ Ադամը հետաքրքրասեր էր, Եվայից արմատախիլ էր անում ամենատարբեր նրբություններ, որոնք կնոջ անլիարժեքությանն էին առնչվում:

Եվան աշխատում էր օրնիբուն, ժրաջան մեղվի պես, զուգահեռ սովորում էր Բժշկական համալսարանում, բայց չէր տրտնջում երբեք: Օրը սկսում էին միասին, բարձրանում էին սարն ի վեր, երբ լուսաբացը դեռ նոր էր արթնանում գագաթնամերձ անտառակում: Ապա գալիս էր հերթական երեկոն, և կինն իր խոնջացած մարմնով հպվում էր տղամարդու խոշոր մարմնին՝ ազատագրվելով միայնության ահասարսուռ զգացողությունից: Այսքանը... Որևէ այլ բան կինը չէր ցանկանում:

Եվ հենց այն օրը, երբ Բժշկական համալսարանն ավարտել էր գերազանց վկայականով և տուն մտավ լիառատ ուրախությամբ, չգտավ նրան... Սեղանին հակիրճ երկտող կար. «Սիրելիս, հիմա իմ հեռանալու ամենաճիշտ ժամանակն է, հուսով եմ՝ ինձ ճիշտ կհասկանաս»: Եվան երկար սպասեց հոգեմտերիմին, բայց այդպես էլ չիմացավ, թե ո՞ւր տարան Ադամին չբարձրաձայնված մտքերն և սրտի ոլորուն ճանապարհները:

...Արդեն քսանմեկերորդ դարն է: Տատիկը չկա: Եվան ամեն ինչ կտար, որպեսզի նորից լսեր նրա փնթփնթոցը: Նա տատիկին կբացատրեր, որ «աչք քոռացնելը» զուր չէր: Քանզի «անճոռնի ճուտիկը» մեծ հաջողության հասավ: Հաջողություն, որ շատ քչերին է տրվում: Նա կատարելության է հասցնում հոլիվուդյան աստղերի հոլիվուդյան ժպիտներն իր ատամնաբուժարանում: Իսկ տղամարդ հաճախորդներից շատերն են տենչում նրա ժպիտին այնպես, ինչպես հին հեքիաթում փեսացուները «արքայադստեր» բարեհաճությանը:

Եթե տատիկը կենդանի լիներ, Եվան գաղտնիք կշշնջար նրա ականջին: Միայն նրան կասեր. «Ամենաճիշտը հայրենի քաղաքում մնալն է, լոթի տղաներից մեկի հետ զույգվելն ու երեխաներ ունենալը»: Այդպես եղել էր ցեղի անցյալում, այդպես էլ պիտի լիներ թերևս... Չէ՞ որ ծնողները նախընտրել էին աստվածաշնչյան Եվա անունը, որ նշանակում է՝ կենդանություն՝ կյանք սկզբնավորելու իմաստով: Բայց հանգամանքներն ու Վերին միջամտությունը երբեմն այլ ուղիներ են մատնանշում: Եվան կին էր ա՛յլ ճակատագրով: Բայց նաև գիտեր, իր կյանքի փորձով գիտեր, որ տխուր, շատ տխուր է, երբ կինն իր փխրուն ուսերի վրա մեծ ծանրություն է վերցնում: Աշխարհի ամենամեծ տխրությունն է, երբ կինն ուժեղ է դառնում:

Աշխատանքից հետո «արքայադուստրը» փակվում է քաղաքից դուրս գտնվող իր առանձնատանը: Նա հաճախ զննում է իրեն հսկայական հայելու մեջ, հարցական նայում նրբագեղ, անծանոթ կնոջը, որ մանկության թրթիռ ունի աչքերում: Կինը երեկվա աղջնակն է այս թրթիռի մեջ, սակայն մեկ այլ, անծանոթ դեմք է հայելու հսկա արտացոլանքում: «Արքայադուստրը» փորձում է մոռանալ օրվա գերլարված անդրադարձները, որոնք սկսվել են շատ հեռվից՝ խմորեղեն թխելու կորսված ընթացքից, ու վերածվել դժվարին դասընթացների, «անհաղթահարելի» քննությունների, բերել հասցրել են իրեն օտարված, դատարկ մի տեղ, որտեղից փչում են անձկության քամիները:

Հայաստանից հեռու...

➢6 Ուշագրավ է այն փաստը, որ դպրոցում օտարազգի ծնողների խնդրանքով գործում էր «օտարազգի մայրիկների» խումբ, որտեղ հիմնականում ուսուցանվում էր խոսակցական հայերեն լեզու և հայ ժողովրդի ու մշակույթի ծեսերն ու ավանդույթները: Դպրոցում գործում էր մշակութային տարբեր խմբակներ, դասավանդում էին հայոց լեզու, պատմություն, աշխարհագրություն:

Միջոցառումներից մեկի ժամանակ մեծ հայրենասեր Աննա Օսեփյանն ասել է. «Համոզված, որ ստեղծված իրավիճակում միայն հայրենաճանաչությունը կօգնի դիմակայելու գաղափարական բոլոր արհավիրքներին, որոշեցինք սկսել ինտելեկտուալ դիմադրական շարժում, որպեսզի, ըստ կարելվույնս, պայքարենք մեր ինքնության պահպանման համար: Մեր համեստ հնարավորություններով կաշխատենք օգնել հարստացնելու ձեր իմացությունը Հայկական բարձրավանդակի, հայոց պատմաաշխարհագրության, մշակութային ժառանգության, ավանդույթների, հատկապես մեր անզուգական մայրենի լեզվի և ազգային այլ արժեքների վերաբերյալ, ծանոթացնելու հայ երևելի անհատների կյանքին ու գործունեությանը... Մենք ընտրյալ ժողովուրդ ենք և առաքելություն ունենք...»:

Չխախտելով իր սկբունքները և անգամ արդեն հեռու լինելով Օրենբուրգից՝ Աննա Օսեփյանը աջակցեց երիտասարդ հայուհի Անի Մկրտչյանին, ում անսահման սերն ու կարոտը դեպի հայրենիքը ստիպեցին հիմնել հայկական մշակույթի ակադեմիա, որն անվանեց «Արմատ 56»: Այստեղ երեխաները սովորում են գրել - կարդալ հայերեն, նշում են բոլոր հայկական և եկեղեցական տոները ուսուցիչների և ծնողների հետ միասին: Թատերական բեմադրությունների միջոցով սովորում և տեսնում են մեր ավանդույթները: Ակադեմիա հաճախում են նաև երեխաներ, ովքեր երբևէ չեն եղել Հայաստանում և ոչ մի պատկերացում չունեն նրա մասին: Այստեղ ուսուցչուհու համար առաջանում է ևս մեկ խնդիր-նպատակ՝ երեխային ծանոթացնել Հայաստանին, այնպես անել, որ նա կարողանա սիրել իր հայրենիքը: Ակադեմիայի տնօրենությունը հետաքրքիր միջոց է մտածել՝ երեխաներին ծանոթացնել նաև մեր հայկական համեղ խոհանոցին: Ամիսը մեկ անգամ ուսուցիչները պատրաստում են մեկ ուտեստ, որը ճաշակում են երեխաները և հայտնում իրենց կարծիքը:

Օրենբուրգի մարզում ապրում են շուրջ 126 ազգի ներկայացուցիչներ, և այդ իսկ պատճառով շատ հաճախ կազմակերպվում են բազմաթիվ փառատոներ ու միջոցառումներ, որտեղ վերջիններս ներկայացնում են իրենց մշակույթն ու խոհանոցը: Եվ պետք է հպարտությամբ նշել, որ հայերը միշտ ներկայանում են լավագույնս՝ գրավելով առաջին հորիզոնականները. նրանց շարքում են նաև «Արմատ 56» ակադեմիայի սաները:

Ակադեմիայի տնօրեն Անի Մկրտչյանը մի առիթով ասել է. «Հայաստանից հեռու, բայց մտքերով միշտ այնտեղ՝ Օրենբուրգի հայերը և հատկապես «Արմատ 56» ակադեմիայի ողջ անձնակազմը, երեխաներն ու ծնողները ամուր կապված են իրենց արմատներին: Առիթը երբեք բաց չենք թողնում ամենուր հպարտությամբ շեշտելու մեր հայ լինելը:

Եվ ուրեմն, հարգելով ուրիշների պատմությունն ու ավանդույթները, իմանանք մեր անցյալը, պահենք մեր ազգային արժեքները, խոսենք հայերեն և հայի անկոտրում ոգով գնանք առաջ»:

Անի ՄԿՐՏՉՅԱՆ
ՌԴ, ք. Օրենբուրգ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2023-2024 ուսումնական տարվա ասպիրանտուրայի հեռակա ընդունելություն

1. Մանկավարժության տեսություն և պատմություն - ԺԳ.00.01 (1 տեղ)

2. Սոցիալական հոգեբանություն - ԺԹ.00.03 (1 տեղ)

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Ասպիրանտուրա ընդունվելու համար տրվում է դիմում հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

2) օտար լեզվի ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ),

3) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում,

4) անձնագրի և սոցիալական քարտի պատճենները,

5) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3x4 չափսի),

6) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

2. Ստորև նշված օտար լեզուներից որևէ մեկից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում՝

1) անգլերենից՝ «TOEFL» (iBT) (այԲիԹի)՝ 46 և «IELTS» (ԱՅԼԹՍ)՝ 5.5 միավորը,

2) ֆրանսերենից՝ «TCF» (ԹիՍիէՖ)՝ 200 միավորը,

3) գերմաներենից՝ «on DaF» (օն ԴաՖ)՝ 60 միավորը:

Փաստաթղթերն ընդունվում են ս.թ. օգոստոսի 22-ից մինչև սեպտեմբերի 07-ը (ներառյալ):

Ընդունելության մասնագիտական քննությունները կազմակերպվում են ս.թ. սեպտեմբերի 11-ից 14-ը (ներառյալ):

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 2-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն, հեռ՝. 59-70-29:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ